| Ավագյան Հայկ - Հայկական Բժշկական Ասոցիացիա | Հայաստանի բարեկամները Սան Ֆրանցիսկոյի ծոցի շրջանից | Բժշկական պարագաներ | Հայկական բժշկական ասոցիացիա ՀԿ: Կազմակերպության իրավաբանական հասցեն է Թումանյան 38-9, գործունեության հասցեն Պ.Սևակ 5, հվհհ 00074027: | Բուժ պարագաները պետք է անվճար տրամադրվեն տարբեր հիվանդանոցների, այդ թվում Սուրբ Ներսես Մեծ ԲԿ, համապատասխան անվճար բուժծառայություններ մատուցելու նպատակով: | Բուժ պարագաները պետք է անվճար տրամադրվեն տարբեր հիվանդանոցների, այդ թվում Սուրբ Ներսես Մեծ ԲԿ, համապատասխան անվճար բուժծառայություններ մատուցելու նպատակով: | SC 222-11 | 10 | | 101 | 23,810.00 |
| Գողմոյան, Ռոմեն - Գյումրիի հաշմանդամ որբերի տուն | Հինթիրյան Հերման (Միչիգան) | Հագուստ և կոշիկ | Գյումրիի հաշմանդամ որբերի տուն, բարեգործական հիմնադրամ, Հասցե՝ Գյումրի, Շահումյան 159, ՀՎՀՀ 05522663 | Բարեգործական նպատակ մանկատան սաներին բաշխելու համար | Թոչունյան տուն մանկատուն կրթարան | SC 222-09 | | 3 | 1,536 | 20,880.00 |
| Հ.Հ. Գարեգին II - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | Արևելյան թեմ | Գրքեր | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Արարատյան փողոց 17, ՀՎՀՀ՝ 04703401 | Բեռները հատկացվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որից օգտվում են Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի, սաները և աշխարհիկ անձինք | Բեռները հատկացվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որից օգտվում են Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի, սաները և աշխարհիկ անձինք | SC 222-07 | 14 | | 361 | 14,000.00 |
| Հարությունյան Ս. - Մեծ Ներսես բարեգործական կազմակերպություն | Արևելյան թեմ | Գրքեր | <Մեծն Ներսես> Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, Երևան Կորյունի 6ա բն,1, ՀՎՀՀ 01513853 | Նպատակը՝ անհատույց փոխանցել Հայաստանի Ազգային գրադարանին, վերջինիս կողմից գրադարանային անվճար ծառայություններ մատուցելու, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարելու համար | Բեռի ստացման իրական շահառուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Ազգային գրադարան, նվիրատվությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | SC 222-06 | 12 | | 288 | 10,000.00 |

# ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ՍՏԱՑՈՂ | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայրապետյան Ռուզաննա - Հայ օգնության առաքելություն | Դոկտոր Քաշյան Ստեֆեն (Իլինոյիս) | Դեղեր | Հայ օգնության առաքելություն, Վանաձոր, Տարոն-4 թաղամաս | Դեղորայքը տրամադրվելու է ԱՌՄ ԲՀԿ-ում ՀՀ առողջապահության | Շահառուները Լոռու մարզի ամբուլատոր բուժհիմնարկներում և ԱՌՄ ԲՀԿ-ում գրանցված | SC 222-03 | 7 | | 75 | 36,545.00 |
| | | | | | | SC 222-18 | 1 | | 16 | 12,543.00 |
| Հեկեկյան Տիգրան - Հայ փոքրիկ երգիչներ | Հայկական մշակութային հիմնադրամ | սկավառակներ | <<Հայ Փոքրիկ Երգիչներ>> միջազգային ասոցիացիա: Քաղաք Երևան, Կիևյան 26-39, ՀՎՀՀ 00009658 | Բեռն օգտագործվելու է բացառապես բարեգործական նպատակով: Հատկացվելու է տարբեր մշակութային կազմակերպությունների և, անհատներին և հանրակրթական դպրոցներին: | Խտասալիկները անվճար կտրամադրվեն անվանի երաժիշտներին, երաժշտական ուսումնական հաստատություններին, գրադարաններին, երգչախմբերին, հանրակրթական դպրոցներին, մշակութային ՊՈԱԿ-ներին, երկիր ժամանած պատվավոր հյուրերին: Գրքերը կփոխանցվեն Հակոբ Կարապենցի անվան հանրակրթական դպրոցի վերջերս վերանորոգված գրադարանին: | SC 222-01 | 20 | | 200 | 5,250.00 |
| Կարապետյան Լիանա - «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ | Հայ օգնության հասարակություն (Արևելք) | Հագուստ | «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն ք. Երևան, Ա. Արմենակյան 119, ՀՎՀՀ 01534723 | բարեգործական նպատակ, Հետագա օգտագործման կարգը՝ Մուտք պահեստ, այնուհետև կարիքն առաջանալու պահին դուրս գրում պահեստից | մանկան տան խնամքի տակ գտնվող նորածնից մինչև 6 տարեկան երեխաներ, Նպատակը՝ երեխաների հագուստների կարիքները բավարարելու համար | SC 222-10 | 3 | | 31 | 810.45 |
| ՀՀ առողջապահության նախարարություն, Քուշկյան Հարություն | Միացյալ հայկական հիմնադրամ | Դեղեր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, Գտնվելու վայրը - ք. Երևան, Նոր-Արեշ 35 Իրավաբանական հասցեն - ք. Երևան, | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | SC 222-14 | 2 | | 13 | 38,232.98 |
| | | Բժշկական պարագաներ | | | | SC 222-15 | | 10 | 1,897 | 109,651.57 |





ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ՍՏԱՑՈՂ | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լեռնյան Ռենե, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության | Ամերիկայի հայկական ավետարանչական ասոցիացիա | Մանկական սնունդ | | Շահառուները - մանկական սնունդը բաշխվելու է մինչև 2 տարեկան անապահով ընտանիքների երեխաներին՝ «Կաթ հայ մանուկներին» ծրագրի շրջանակներում, որը գործում է 1991 թվականից: | Շահառուները - մանկական սնունդը բաշխվելու է մինչև 2 տարեկան անապահով ընտանիքների երեխաներին՝ «Կաթ հայ մանուկներին» ծրագրի շրջանակներում, որը գործում է 1991 թվականից: | SC 222-05 | | 11 | 4,186 | 27,720.00 |
| | | Սուրբ ծննդյան նվերներ և հագուստ | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, Հասցե՝ ք. Երևան, Նիկոլ Դումանի 22, ՀՎՀՀ – 00032803 | Հագուստները և նվերները բաշխվելու են անապահով ընտանիքներին մեր ընկերակցության սոցիալական բաժինների միջոցով: | Հագուստները և նվերները բաշխվելու են անապահով ընտանիքներին մեր ընկերակցության սոցիալական բաժինների միջոցով: | SC 222-12 | 29 | | 397 | 14,286.00 |
| Մնացականյան Աննա - Հայ Օգնության Միություն | Հայ օգնության հասարակություն (Արևելք) | Հագուստ և կոշիկ | ք. Երևան, Նալբանդյան 116/24 /գտնվելու վայրը եվ իրավաբ. հասցեն նույնն է/, հվհհ - 01512885 | բեռները անհատներին տրամադրվելու են որպես հումանիտար օգնություն , բարեսիրություն | ՀՕՄ-ի Հայաստանի 51 մասնաճյուղերի միջոցով բեռները տրամադրվելու են Հայաստանի սոցիալապես անապահով ընտանիքներին եվ Հայաստանի մանկատների շրջանավարտներին: | SC 222-13 | 52 | | 1,173 | 26,852.00 |
| Սաջոյան, քույր Ա. Հայաստանի տիրամայր | Կազանչյան Աննա (Նյու Յորք) | Հագուստ, կոշիկ և սկավառակներ | Անարատ հղիության հայ քույրերի միաբանության տիրամայր Հայաստանի կուսաստան կազմակերպություն, Հասցե՝ ք. Գյումրի, Անի թաղամաս, Չարենց 6, ՀՎՀՀ 05513266 | Բարեգործական նպատակ՝ մանկատներին բաշխելու համար | Մանկատան երեխաներ՝ երեխաներին հատկացման նպատակով | SC 222-02 | 14 | | 136 | 7,900.00 |
| Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC | Հովարդ Քարաքոյան կորպորացիա | Ավտոկլավ սարք | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ք. Երևան 0047, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: | Բարեգործական նպատակ (ՀՀ ԿԲՃՀՀ 18.02.2011թ. N Ս-097-Ա որոշում «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ կողմից 2011թ. ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին): | Ավտոկլավ սարքը նախատեսված է «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Վանաձորի մասնաճյուղ դարմանատան համար, ուր հաշվառված են մինչև 14 տարեկան 16 248 երեխաներ, որոնք ստանում են անվճար ատամնաբուժական հետազոտություն և բուժում: | SC 222-04 | 1 | | 9 | 2,175.00 |

ՄՀՀ
ԲԵՌՆԱՐԿՂ 222

# ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ՍՏԱՑՈՂ | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զարգարյան Տիգրան - Հայաստանի ազգային գրադարան | Արևելյան թեմ | Գրքեր | Հայաստանի Ազգային գրադարան ՊՈԱԿ, Երևան 375009, Տերյան 72, ՀՎՀՀ 01506092 | Նպատակը՝ գրադարանային անվճար ծառայություններ մատուցելը, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարելը | Բեռի ստացման իրական շահառուն Հայաստանի Ազգային գրադարանն է, նվիրատվությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | SC 222-08 | 22 | | 369 | 15,000.00 |
| Ընդամենը՝ | | | | | | | 187 | 24 | 10,787 | 368,656.00 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-078-Ա**
**քաղ. Երևան**

### ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 18-ի N 3/3.8-1/357-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 255-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունվարի 17-ի N 03/07-1/280-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 17-ի N ԱԱ/3-4/309-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) իրականացվող՝ 120 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը (կցվում է):

2. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի նախագահ՝ Հ. Կարապետյանի կողմից

"28" դեկտեմբերի 2011թ.

Աջակցություն «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի՝ Տիեզերական ճառագայթների բաժանմունքի (ՏՃԲ) գործունեությանը

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի անմիջական նպատակն է աջակցել <Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա> հիմնադրամի՝<br>– գիտական համակարգի տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը,<br>– մտավոր ներուժի արտահոսքի կանխմանը,<br>– գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերություն (AESA)» (AESA, 417 W. Arden Ave., Suite 112C, Glendale, CA 91203 USA, Tel: (818) 547-3372)՝ շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացնում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), ք. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի՝ Տիեզերական ճառագայթների բաժանմունքում, և առնչվում են գիտության բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է **120000000** (հարյուր քսան միլիոն) դրամ: Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում «Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերությունը» (AESA)" (AESA, 417 W. Arden Ave., Suite 112C, Glendale, CA 91203 USA, Tel: (818) 547-3372):<br>Գումարների բաշխվածությունը հետևյալն է՝<br>–անհատական ֆինանսական աջակցություն – **36000000** (երեսունվեց միլիոն) դրամ, այդ թվում **12000000** (տասներկու միլիոն) դրամ – 2012 թ. փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **12000000** (տասներկու միլիոն) դրամ – 2013թ ընթացքում, և **12000000** |



| | | |
|---|---|---|
| | | (տասներկու միլիոն) դրամ 2014թ ընթացքում.<br>–միջազգային համագործակցություն (միջազգային մասնագիտական միություններին անդամակցության անդամավճարներ) և գիտաժողովների անցկացում – **3600000** (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ, այդ թվում 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2013թ ընթացքում, և 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2014թ ընթացքում.<br>– գիտական գործուղումներ – **4800000** (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ, այդ թվում **1600000** (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **1600000** (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ – 2013թ ընթացքում, և **1600000** (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ – 2014թ ընթացքում.<br>– հրատարակչական ծախսեր և բաժանորդագրություններ – **3600000** (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ, այդ թվում **1200000** (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **1200000** (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2013թ ընթացքում, և **1200000** (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ – 2014թ ընթացքում.<br>- սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում – **50000000** (հիսուն միլիոն) դրամ, այդ թվում **10000000** (տասը միլիոն) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **30000000** (երեսուն միլիոն) դրամ – 2013թ ընթացքում, և **10000000** (տասը միլիոն) դրամ – 2014թ ընթացքում.<br>- կայանի վերանորոգման և զոլատնման ծախսեր (անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, սննդի, վառելիքաքսանյութերի և ծառայությունների ձեռքբերում) – **16000000** (տասնվեց միլիոն) դրամ, այդ թվում **8000000** (ութ միլիոն) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **4000000** (չորս միլիոն) դրամ – 2013թ ընթացքում, և **4000000** (չորս միլիոն) դրամ – 2014թ ընթացքում.<br>– ԳԱՏԱՀ–ի կազմակերպչական ծախսերը – **6000000** (վեց միլիոն) դրամ, այդ թվում **2000000** (երկու միլիոն) դրամ – 2012 թ. Փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **2000000** (երկու միլիոն) դրամ – 2013թ ընթացքում, և **2000000** (երկու միլիոն) դրամ – 2014թ ընթացքում.<br>: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողն է <Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա> հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքը (քաղ. Երևան, Ալիխանյան եղբայրների փ. 2, ՀՎՀՀ՝ 01202364), որի կողմից ներկայացված առաջարկությունը ֆինանսական աջակցության է երաշխավորվել "Բարեգործի" կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 35 ամիս, սկսած 2012թ փետրվարի 1-ից, մինչև 2014թ հունվարի 1–ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են.<br>- դրամաշնորհի ֆինանսական և նյութական միջոցների ստացումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին՝ (**114000000** (հարյուր տասնչորս միլիոն) դրամ, 2012թ փետրվարի 1-ից, մինչև 2014թ հունվարի 1–ը:), այդ թվում սարքերի, նյութերի և այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին (**68800000** (վաթսունութ միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2012թ փետրվարի 1-ից, մինչև 2014թ հունվարի 1–ը:): |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հանրապետության ներսում ձեռք բերել տարբեր տեսակի ռադիոտեխնիկական հանգույցներ և մասեր, քիմիական նյութեր, գրենական պիտույքներ, տարբեր հետազոտական սարքավորումներ, վառելիքաքսանյութեր, սննդամթերք՝ բարձր լեռնային կայաններում մարդկանց գոյատևումը ապահովելու համար, հրատարակչական և տարբեր այլ ծառայություններ՝ ընդամենը **68800000** (վաթսունութ միլիոն ութ հարյուր հազար) դրամի չափով (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային արտոնություններ): |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նշված ծրագրից, որպես կազմակերպչական ծախսեր, "Բարեգործի" կողմից ԳԱՏՍՀ–ին տրամադրվելու է գումարի 5,0%–ը, ինչը կազմում է **6000000** (վեց միլիոն) դրամ:<br>Այդ գումարից **3600000** (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ նախատեսվում է ծախսել որպես աշխատակիցների աշխատավարձ, իսկ **2400000** (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ՝ որպես գրասենյակային ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |



| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ընթացիկ հաշվետվությունների հիման վրա:<br>Միևնույն ժամանակ ԳԱՏՍՀ–ի կողմից՝ սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ծրագրի ղեկավար Գ. Մանասարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-079-Ա**
**քաղ. Երևան**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «2012-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-1/765-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 24-ի N 268-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունվարի 27-ի N 04/07-1/738-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 24-ի N ԱԱ/3-4/562-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող՝ 83 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «2012-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2003 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 282767 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 240000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի ապրիլի 12-ին կնքված՝ N 010253967 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 472000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 21-ին կնքված՝ N 008241 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 576000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «Արմինկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01501597) 2009 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 20681 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային կապի ծառայությունների մատուցում՝ 440000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Նոյյան Տապան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02514983) 2011 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում գրենական և գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 320000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2011 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության և հաշվեքննության իրականացում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային
Հիմնադրամի նախագահ Հ.Կարապետյանի կողմից

«16» հունվարի 2012թ.

2012-2013 թթ. ընթացքում ՀՀ գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի անմիջական նպատակներն են աջակցել՝<br>–Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը,<br>–միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին,<br>–մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին,<br>–ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին,<br>–միջազգային չափորոշիչներին համապատասխանող քաղաքացիական բնույթի գիտական հետազոտությունների իրականացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել մաքսային և հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացնում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ 00040233 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային կազմակերպություններում և առնչվում են գիտության և կրթության բնագավառին: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է **83000000** (ութսուներեք միլիոն) դրամ:<br>Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 Ծրագրի ընդհանուր ֆինանսական աջակցության ծավալները բաշխվելու են ըստ հետևյալ ուղղությունների՝<br><br>**– հետազոտական շնորհներ – 48000000** (քառասունութ միլիոն) դրամ,<br>որից՝<br>– անհատական ֆինանսական աջակցություն – **24000000** (քսանչորս միլիոն) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br>– գիտական գործուղումներ – **4800000** (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br>– սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում - **19200000** (տասնինը միլիոն երկու հարյուր հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br><br>**– երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն** (SASP-12) - **4600000** (չորս միլիոն վեց հարյուր հազար) դրամ,<br>որից՝<br>– անհատական ֆինանսական աջակցություն – **2080000** (երկու միլիոն ութսուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br>– սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում - **2520000** (երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br><br>**– ասպիրանտական հետազոտությունների աջակցություն** (GRSP-12) - **2200000** (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ,<br>որից՝<br>– անհատական ֆինանսական աջակցություն – **1400000** (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը, |

| | | |
|---|---|---|
| | | – սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում - 800000 (ութ հարյուր հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br><br>– գիտական ճանապարհորդությունների աջակցության ծրագիր (TSP) - 9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br><br>– Հայաստանում միջազգային գիտաժողովների կազմակերպման աջակցություն (ISCSP) – 2040000 (երկու միլիոն քառասուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br><br>– ԳԱՏԱՀ–ի կազմակերպչական ծախսեր – 16560000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ,<br>որից՝<br>– աշխատավարձ – 12912000 (տասներկու միլիոն ինը հարյուր տասներկու հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br>– գրասենյակի երեք հիմնական հեռախոս – 472000 (չորս յոթքնքսուներկու հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br>– գրասենյակի բջջային հեռախոս – 240000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br>– գրասենյակային ինտերնետային կապ – 440000 (չորս հարյուր քառասուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը<br>– գրասենյակի էլեկտրաէներգիայի ծախսեր – 576000 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը,<br>– աուդիտ – 880000 (ութ հարյուր ութսուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2012թ. մարտի 31–ը<br>– սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում – 1040000 (մեկ միլիոն քառասուն հազար) դրամ 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը : |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Նշված ծրագրով բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝<br>ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային բոլոր կազմակերպությունները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունները գիտական անկախ փորձաքննության արդյունքներով ֆինանսական աջակցության կերաշխավորըվեն ծրագիրն իրականացնողի կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 12 ամիս, սկսած 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են.<br>դրամաշնորհի ֆինանսական և նյութական միջոցների ստացումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին՝ 66440000 (վաթսունվեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը, այդ թվում սարքերի, նյութերի և այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին՝ 22520000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամ, 2012թ. փետրվարի 1–ից մինչև 2013թ. մարտի 1–ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ Հանրապետությունից դուրս) համակարգչային տեխնիկա և օժանդակ նյութեր, լաբորատոր սարքավորում և կահույք, գրենական պիտույքներ, ինչպես նաև տարբեր ծառայություններ՝ ընդամենը 22520000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամի:<br>Հաշվի առնելով այն, որ ծրագրերը դեռ ակտիվացված չեն, գնումների մոտավոր բաժանումը հետևյալն է՝<br>4400000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) դրամի՝ Հանրապետությունից դուրս կատարվող գնումներն են (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ մաքսային արտոնություններ), և 18120000 (տասնութ միլիոն հարյուր քսան հազար) դրամի՝ Հանրապետության ներսում կատարվող գնումներն են (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային արտոնություններ):<br>Նշված թվերի փոփոխման դեպքում մենք դիմելու ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ներկայացված |

| | | |
|---|---|---|
| | | ծրագրում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը, | Նշված ծրագրից, որպես կազմակերպչական ծախսեր, «Բարեգործի» կողմից ԳԱՏՍՀ-ին տրամադրվելու է գումարի 19,95%, ինչը կազմում է 16560000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ:<br>Այդ գումարից 12912000 (տասներկու միլիոն ինը հարյուր տասներկու հազար) դրամ նախատեսվում է ծախսել որպես աշխատակիցների աշխատավարձ, իսկ 3648000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունութ հազար) դրամ՝ որպես գրասենյակային ծախսեր (այդ գումարի անհրաժեշտ սարքավորումների և ծառայությունների ձեռք բերումը կատարվելու է Հանրապետության ներսում, ինչի համար ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային արտոնություններ): |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա:<br>Միևնույն ժամանակ, ԳԱՏՍՀ-ի կողմից, սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ծրագրի ղեկավար Հ.Կարապետյան

Считал 1$ = 400 драм

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-080-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-1/537-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 251-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N ՀՔ/03.2/451-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 18-ի N ԱԱ/3-4/367-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2651610 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխայի առողջության պետական անձնագրի տպագրություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01549453) 2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված՝ N WVA/TST CHN/PR-12/001 (RB)-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երեխայի առողջության պետական անձնագրի տպագրման աշխատանքների իրականացում՝ 1950000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01549453) 2011 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված՝ N WVA/TST CHN/PR-12/001 (RB) (Additional) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երեխայի առողջության պետական անձնագրի տպագրման աշխատանքների իրականացում՝ 701610 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Հաստատված է**
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն
Գրահամ Սթրոնգ
12 հունվարի, 2012թ ,

## «Երեխայի առողջության պետական անձնագրի տպագրություն»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Տպագրել «Երեխայի առողջության պետական անձնագիր» երեխաների համար, որի նպատակն է իրազեկել ծնողներին վաղ տարիքում, թե ինչպես մեծացնել առողջ երեխա և կանխարգելել մի շարք հիվանդություններ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | • Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա, հասցե World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, United Kingdom հեռ +44 1908 841000<br>• Վորլդ Վիժն ԱՄՆ, հասցե 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռ` +1-888-511-6548<br>• Վորլդ Վիժն Շվեյցարիա, հասցե `World Vision Schweiz , www.worldvision.ch, Kriesbachstr. 30, CH-8600 Duebendorf, Switzerland, հեռ `: +41-44-510-1579<br>• Վորլդ Վիժն Ֆրանսիա, հասցե` 7 rue Pasquier - 75008 Paris, հեռ` +33-1-48-03-92-42<br>• Վորլդ Վիժն Թայվան, հասցե `6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan հեռ` 886-2-2175-1995<br>• Վորլդ Վիժն Կանադա, World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada հեռ. 905-565-6100 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե` ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևանում և ՀՀ բոլոր մարզերում<br><br>Բնագավառը` առողջապահական |

| | | |
|---|---|---|
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 651 610 (երկու միլիոն վեց հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր տաս) դրամ<br>Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա — 462 501<br>Վորլդ Վիժն ԱՄՆ — 462 501<br>Վորլդ Վիժն Շվեյցարիա — 308 334<br>Վորլդ Վիժն Ֆրանսիա — 246 667<br>Վորլդ Վիժն Թայվան — 400 832<br>Վորլդ Վիժն Կանադա — 770 832 |
| 7 | Բարեգործություն ստացողը | Երեխայի առողջության պետական անձնագրերը հանձնվելու են ՀՀ առողջապահության նախարարությանը` Երևան քաղաքի և 10 մարզերի ծննդատներում 2012 թվականին ծնված 33995 երեխաների ծնողներին տրամադրելու նպատակով: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Դեկտեմբերի 23 – փետրվարի 15, 2012թ |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է տպագրել 33, 995(երեսուներեք հազար ) օրինակ, միավոր գինը` 78 դրամ:<br>Երեխայի առողջության պետական անձնագիրը պարունակում է տարբեր տեսակի ինֆորմացիա` երեխայի աճի, զարգացման և խնամքի, առողջության իրավունքի և բուժօգնության ծառայությունների վերաբերյալ: Անձնագրում առկա են երեխայի աճի և զարգացման կորագծեր ինչպես նաև պատվաստումների օրացույց, որտեղ ծնողը երեխայի բուժօգնությունն ապահովող աշխատողների հետ համատեղ պետք է կատարի գրառումներ և նշումներ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |

Row 9 — միջոցառումներ:

| Միջոցառումների նկարագրությունը | Ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Երեխայի առողջության պետական անձնագրերի համակարգչային դիզայնի հստակեցում | Դեկտեմբերի 23-28, 2011թ | չի պահանջվում |
| Երեխայի առողջության պետական անձնագրերի տպագրություն | Դեկտեմբերի 29, 2011թ – փետրվարի 7, 2012թ | 2 651 667 ՀՀ դրամ |
| Երեխայի առողջության պետական անձնագրերի բաշխում | փետրվարի 8 - 15, 2012թ | չի պահանջվում Բաշխումը կատարվելու է ՀՀ առողջապահության նախարարության կողմից |

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը պարտավորվում է ստանձնել միայն տպագրության հետ կապված ծախսերը: «Երեխայի առողջության պետական անձնագրերը» հանձնվելու են ՀՀ Առողջապահության նախարարությանը, վերջինս էլ պատասխանատվություն է կրում իրականացնելու հետագա աշխատանքները: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորողների կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի «Երեխայի առողջությունն առաջնային է» Ծրագրի պատասխանատուի կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Աշխատանքների համար վճարումը կկատարվի կատարած աշխատանքի դիմաց՝ համաձայն կատարողական ակտերի՝ բոլոր շահագրգիռ կողմերի ստորագրությամբ:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Սուսաննա Բագրատունի 12.01.2012

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Փորձագիտական աջակցման խմբի ղեկավար

COMMISSION OF THE GOVERNMENT OF RA CHARITABLE PROGRAMS COORDINATING 02505251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-081-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱՁԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 25-ի N 3/3.8-2/705-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 25-ի N 1/06/61-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 24-ի N ԱԱ/3-6/565-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Լեհաստանի նետաձգության ֆեդերացիայի կողմից, միջազգային մրցաշարեր անցկացնելու համար՝ որպես օժանդակություն «Հայաստանի նետաձգության ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (16 տեղ, 10500 կգ ընդհանուր քաշով, 7500 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4539.04 եվրո, «Արարատյան» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի նետաձգության ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-082-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱ-ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-2/571-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 1/06/53-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 24-ի N ԱԱ/3-6/564-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միջազգային դահուկային սպորտի ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (12 տեղ, 176 կգ ընդհանուր քաշով, 5111.20 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 690 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-083-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-2/572-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 1/06/54-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 19-ի N ԱԱ/3-6/425-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Միջազգային հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 60 գնդակի (3 տեղ, 27 կգ ընդհանուր քաշով, 300 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 259.06 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-084-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱ-ՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-2/539-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 19-ի N ԱԱ/3-6/424-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուրասիրություն-ների սրահի համար ձեռք բերված և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հասցեով ստացված խոհանոցային սարքավորումների ու կահույքի (5 տեղ, 452 կգ ընդհանուր քաշով, 5920 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխա-դրման ծախսերը կազմել են 662 եվրո, 33 տեղ, 640.2 կգ ընդհանուր քաշով, 3484.51 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 938 եվրո և 14 տեղ, 740 կգ ընդհանուր քաշով, 17500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխա-դրման ծախսերը կազմել են 1050 եվրո, «ՄԾՓ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-085-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-2/243-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-6/177-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) ձեռք բերված շինարարական ռետինե հակավիբրացիոն ռետինե ծածկերը և պոլիմերային միակողմանի ինքնասոսնձվող ժապավենները (97 տեղ, 79200.18 կգ ընդհանուր քաշով, 144175 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 20400 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-086-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N Մ-001-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 20-ի N 3/3.8-2/479-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 18-ի N ԱԱ/3-6/368-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված իմունոֆերմենտային թեստ հավաքածուն (մեկ տեղ, մեկ կգ ընդհանուր քաշով, 339 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 55.59 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցների պահպանում և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-087-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-2/806-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 26-ի N ԱԱ/3-6/631-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) գրասենյակային աթոռներ (90 հատ՝ 4 տեղ, 650 կգ ընդհանուր քաշով, 5184 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման կազմել են 557000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ).

2) համակարգիչներ և հարակից սարքեր (82 տեղ, 1066 կգ ընդհանուր քաշով, 74131.45 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1458000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ).

3) համակարգչային սարքավորումներ (5 տեղ, 68 կգ ընդհանուր քաշով, 3300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 248640 դրամ, «Ջվարթնոց» ՄՏ).

4) հեռուստացույց (4 հատ, 4 տեղ, 100.8 կգ ընդհանուր քաշով, 10600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-088-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 24-ի N 3/3.8-2/665-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 24-ի N ՖԲ/ԱնՄ-5/331-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 23-ի N ԱԱ/3-6/490-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշման մեջ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա և 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2 մլն ԱՄՆ-ի դոլարին» բառերը փոխարինել «11.38 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ներմուծված սննդամթերքը (հնդկաձավար՝ 800 տեղ, 20032 կգ ընդհանուր քաշով, 60400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 5800 ԱՄՆ-ի դոլար փոխա-

դրման ծախսերը և մակարոն՝ 2000 տեղ, 20390 կգ ընդհանուր քաշով, 45200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*Դիակոնիա բարեգործական հիմնադրամի*

*տնօրեն Բ. Զամբազյանի կողմից*

«*26*» *հունվարի* 2012թ.

## «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | |
|---|---|
| Ծրագրի նպատակը | Բարեգործական/ սննդի հատկացում, բժշկական միջամտություն, տնային խնամքի հատկացում |
| Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային արտոնություններից օգտվելը |
| Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմադրամ |
| Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, ՀՎՀՀ 00068196, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս |
| Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը | ք. Երևան և ՀՀ մարզեր |
| Ծրագրի բյուջեն | 2011թ՝ 2000000 /երկու միլիոն / ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով<br>2012թ.՝ 2880000 /երկու միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով<br>2013թ.՝ 3000000 / երեք միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով<br>2014թ.՝ 3500000 / երեք միլիոն հինգ հարյուր հազար/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով |
| Բարեգործություն ստացողը | 4028 շահառու՝ սոցիալապես անապահով ընտանիքներից, որոնց ընտրությունը կատարվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, վարչական շրջանների սոցիալական բաժինների կողմից, քաղաքապետարանի կողմից |
| Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ. հունվարի 1-ից մինչև 2014թ.-ի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ***Ամենամսյա սննդի հատկացում***<br><br>***<u>ք. Երևան</u>*** – 2905 շահառու<br><br>Նախատեսվում է 1262077 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>***<u>Արարատի մարզ՝</u>*** **- 87 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Արտաշատ -16 երեխա, ք. Վեդի- 17 երեխա, գ. Գետազատ- 33 երեխա, գ. Մրգանուշ- 15 երեխա, գ. Վարդաշեն- 4 երեխա, գ. Դեղձուտ -2 երեխա<br>Այս մարզում նախատեսվում է 37797 ԱՄՆ դոլարին համարժեք սննդի հատկացում:<br><br>***<u>Կոտայքի մարզ՝</u>*** **- 107 շահառու**<br><br>ք. Աբովյան – 38 երեխա, ք. Չարենցավան- 13 երեխա, գ.Սևաբերդ -38 երեխա, գ. Ջրառատ-18 երեխա,<br>Նախատեսվում է 22157 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>***<u>Գեղարքունիքի մարզ՝</u>*** **- 799 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Գավառ-61 երեխա, գ. Գետիկ-73 երեխա, գ. Մարտունի-71 երեխա, գ. Այգուտ-164 երեխա, գ. Անտառ 23 երեխա, գ. Ջրաչանք- 31 երեխա, գ. Դպրաբակ-80 երեխա, գ. Կալավան- 23 երեխա, գ. Վահան-188 երեխա, գ. Բարեպատ -6 երեխա, գ. Թթուջուր -79 երեխա<br>Նախատեսվում է 347126 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում<br><br>***<u>Տավուշի մարզ՝</u>*** **- 33 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Իջևան- 18 երեխա, ք. Դիլիջան -15 երեխա<br>Նախատեսվում է 14337 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>***<u>Լոռու մարզ՝</u>*** - 46 շահառու<br><br>ք. Վանաձոր – 46 երեխա<br>Նախատեսվում է 19985 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>***<u>Արմավիրի մարզ՝</u>*** **- 51 շահառու**<br><br>գ. Արտաշար – 51 երեխա:<br><br>Նախատեսվում է 22157 դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում: |

| | | |
|---|---|---|
| | | 1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -30 շահառու<br>2. Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն -30 շահառու |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. ***Սննդի ձեռք բերում և ներմուծում***՝ 1750000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի տոմատ, ձեթ, բրինձ, շաքարավազ, հնդկացորեն, ալյուր, կարագ և պարենային այլ ապրանքներ<br>2. ***Ապրանքի ձեռք բերում և ներմուծում***՝ 500000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի բժշկական գործիքնե բժշկական սարքավորումներ, օրացույցներ և բացիկներ, ատամնաբուժական աթոռներ, արհեստագործակա գործիքներ, խաղալիքներ, կենցաղային տեխնիկա, հագուստ, սպասքեղեն և այլ պարագաներ<br>3. ***Բուժ. օգնություն ստանալու միջամտություն***՝ 140000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամի չափով, (հիմնադրամի սոցիալապես անապահով այն շահառուներին, ովքեր կդիմեն բժշկական օգնություն ստանալ դեղորայքի գումարի տրամադրման, վիրահատման գումարի հատկացման, տարբեր տեսակի բժշկական միջամտությունների խնդրանքով, «Հույսի ավան» թաղամասում գործող ատամնաբուժարանին հատկացվող բուժանյութերի գնում, ընդ որում մինչև 10 տարեկան երեխաները ծառայություններից օգտվում են անվճար)<br>4. ***Ուսման վարձի հատկացում***՝ 60000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի այն շահառուներին, ովքեր կդիմեն ուսման վարձ հատկացնելու խնդրանքով |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը՝ 422623 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը կազմում է բյուջեի 15 %:<br>1. Աուդիտորական ծառայություն՝ 2597 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>2. Աշխատավարձ՝ 374026 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>3. Վառելանյութ՝ 23377 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>4. Էլեկտրոէներգիայի վարձ՝ 9270 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>5. Ջրի վարձ՝ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>6. Գազի վարձ՝ 3117 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>7. Հեռախոսավարձ և կապ՝ 5195 ԱՄՆ դոլ արին համարժեք դրամ<br>8. Տնտեսական ծախս՝ 4042 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | 1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողո<br>2. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության<br>3. Երևանի քաղաքապետարանի<br>4. Թաղապետարանների և մարզերի սոցիալական ծառայությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շվեյցարական «Դիակոնիա» միջազգային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Կառավարությ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

*Բեռի բաշխման ցանկ*

կոյս 031592 29.12.2011թ.

| N | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը | Քաշը նետտո /կգ/ | Քաշը բրուտտո /կգ/ | Արժեքը ֆրանկ | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների / դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հնդկաձավար | արկղ | 800 | | | | Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ | Գետիկ 74 | 397,655 |
| | | | | | | | | Այգուտ 164 | 881,290 |
| | | | | | | | | Մարտունի 73 | 392,281 |
| | | | | | | | | Դպրաբակ 81 | 435,271 |
| | | | | | | | | Վահան 188 | 1,010,259 |
| | | | | | | | | Կալավան 23 | 123,596 |
| | | | | | | | | Բարեպատ 6 | 32,242 |
| | | | | | | | | Զորավանք 31 | 166,585 |
| | | | | | | | | Անտառամեջ 22 | 118,222 |
| | | | | | | | | Գավառ 61 | 327,797 |
| | | | | | | | | Թթուջուր 81 | 435,271 |
| | | | | | | | Արմավիրի մարզ 50 փաթեթ | Արտաշար 51 | 274,060 |
| | | | | | | | Արարատի մարզ 88 փաթեթ | Վեդի 17 | 91,353 |
| | | | | | | | | Արտաշատ 16 | 85,980 |
| | | | | | | | | Գետազատ 39 | 209,575 |
| | | | | | | | | Մրգանուշ 16 | 85,980 |
| | | | | | | | Կոտայքի մարզ 111 փաթեթ | Չարենցավան 13 | 69,858 |
| | | | | | | | | Սևաբերդ 41 | 220,322 |
| | | | | | | | | Զորաղբյուր 18 | 96,727 |
| | | | | | | | | Աբովյան 38 | 204,201 |
| | | | | | | | Լոռու մարզ 48 փաթեթ | Վանաձոր 48 | 257,939 |
| | | | | | | | Տավուշի մարզ 33 փաթեթ | Դիլիջան 15 | 80,606 |
| | | | | | | | | Իջևան 18 | 96,727 |
| | | | | | | | Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար | 3201 | 17,201,275 |
| | Ընդամենը | | | 20 000 կգ | 20 032 կգ | 5800 ԱՄՆ դոլար ձ/ծ ( 60400 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է) | | 4335 | 23,295,072 |

*Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*

*Բեռի բաշխման ցանկ*

ı1736 03.12.2011

| Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը | Քաշը նետտո /կգ/ | Քաշը բրուտտո /կգ/ | Արժեքը ֆրանկ | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների / դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ակարոն | արկղ | 2000 | | | | Գեղարքունիքի մարզ 804 փաթեթ | Գետիկ | 74 | 297,945 |
| | | | | | | | Այգուտ | 164 | 660,312 |
| | | | | | | | Մարտունի | 73 | 293,919 |
| | | | | | | | Դպրաբակ | 81 | 326,129 |
| | | | | | | | Վահան | 188 | 756,943 |
| | | | | | | | Կալավան | 23 | 92,605 |
| | | | | | | | Բարեպատ | 6 | 24,158 |
| | | | | | | | Ջորավանք | 31 | 124,815 |
| | | | | | | | Անտառամեջ | 22 | 88,578 |
| | | | | | | | Գավառ | 61 | 245,604 |
| | | | | | | | Թթուջուր | 81 | 326,129 |
| | | | | | | Արմավիրի մարզ 51 փաթեթ | Արտաշար | 51 | 205,341 |
| | | | | | | Արարատի մարզ 88 փաթեթ | Վեդի | 17 | 68,447 |
| | | | | | | | Արտաշատ | 16 | 64,421 |
| | | | | | | | Գետազատ | 39 | 157,025 |
| | | | | | | | Մրգանուշ | 16 | 64,421 |
| | | | | | | Կոտայքի մարզ 110 փաթեթ | Չարենցավան | 13 | 52,342 |
| | | | | | | | Սևաբերդ | 41 | 165,078 |
| | | | | | | | Ջրառատ | 18 | 72,473 |
| | | | | | | | Աբովյան | 38 | 152,999 |
| | | | | | | Լոռու մարզ 48 փաթեթ | Վանաձոր | 48 | 193,262 |
| | | | | | | Տավուշի մարզ 33 փաթեթ | Դիլիջան | 15 | 60,394 |
| | | | | | | | Իջևան | 18 | 72,473 |
| | | | | | | Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար | | 3201 | 12,888,154 |
| ընդամենը | | | 20 000 կգ | 20 390 կգ | 2800 ԱՄՆ դոլար ձ/ծ ( 45200 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է) | | | 4335 | 47,453,967 |

*տոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* Է. Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-089-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-1/569-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 24-ի N ԱԱ/3-4/561-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված փոխանցման հաշվով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոնցեռն - էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից (ՀՎՀՀ՝ 01210095) 2012 թվականի հունվարի 12-ին ներկայացված փոխանցման հաշվով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր կենտրոնախույզ խառնիչի ձեռքբերում՝ 1740000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-090-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-042-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-1/807-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 30-ի N ԱԱ/3-4/667-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 19, ՀՎՀՀ՝ 05531591) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-042-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N 410017049/488 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061492 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-



2013 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 120648 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 550000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 95000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-091-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-043-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-1/823-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 27-ի N ԱԱ/3-4/662-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի - ԱՌԴԱ» ծրագրի մասին» N Մ-043-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061363 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 120649 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 112817439 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 60000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012-2013 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 50000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-092-Ա
քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 18-ի N 3/3.8-1/356-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 16-ի N ԱԱ/3-4/249-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի «գ» ենթակետում «մինչև 2011թ. հուլիս» բառերը փոխարինել «մինչև 2012թ. ապրիլ» բառերով:

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ստորգետնյա երկհարկանի ավտոկայանատեղի և հարակից տարածքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 127205830 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-093-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 18-ի N 3/3.8-2/313-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 17-ի N ԱԱ/3-6/312-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշման մեջ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2072.2 մլն դրամ» բառերը փոխարինել «5599.2 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ամրանները (50 տեղ, 131745 կգ ընդհանուր քաշով, 42695250 դրամ [illegible] արժեքով)՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան [illegible] ՍՊԸ [illegible]» [illegible] են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. [illegible] որոշման [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի անվանումը | «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» |
| 2. | Ծրագրի անմիջական նպատակները | ՀՀ ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացում |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միությունն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, Ժնև), Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 5. | Ծրագիրն իրականացնողները | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 6. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքում՝ սպորտի բնագավառում: |
| 7. | Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները | «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց» |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2007 թվականի մարտի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ 4144.2 մլն. դրամ<br>2. Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն. դրամ<br>3. Լուսավորություն՝ 410 մլն. դրամ<br>4. Մարզադահլիճի մանրահատակ՝ 70 մլն. դրամ<br>5. Կահավորում՝ 150 մլն. դրամ<br>6. Շինանյութի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 800 մլն. դրամ<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Մարզադպրոցի շենքի կառուցման նախագծի կազմում («Երևաննախագիծ ՓԲԸ-ի կողմից»)՝ 17,2 մլն. դրամ, մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 1823 մլն. դրամ, տեխնիկական հսկողությունը՝ 1,56 մլն. դրամ, հեղինակային հսկողությունը՝ 7,44 մլն. դրամ, լողավազանի և վերականգնողական կենտրոնի կառուցում՝ 600 մլն. դրամ, խաղադաշտերի համար տրիբունաների կառուցում՝ ստորին մասում տեղադրված հանդերձարաններով՝ 1150 մլն. դրամ: Նախատեսվում է կառուցել նաև 1 հատ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 175 մլն. դրամ (որի համար ՖԻՖԱՆ տրամադրել է 400 հազար ԱՄՆ դոլար) և 10 հատ |

| | | |
|---|---|---|
| | | ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 370 մլն. դրամ: Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն. դրամ, լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 410 մլն. դրամ, մարզադահլիճի մանրահատակի ներմուծում՝ 70 մլն. դրամ, շինանյութի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 800 մլն. դրամ: Կահավորում 150 մլն. դրամ:<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Գործարքները, որոնցով ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում | Ակնկալվում է մարզադպրոցի կառուցման շինարարական և կահավորման աշխատանքների իրականացման, անհրաժեշտ նյութերի ներմուծման և ձեռքբերման գործարքների դիմաց հարկային արտոնություն: |
| 12. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն 5599.2 մլն. դրամ է, որից՝<br>5278.3 մլն. դրամ ՈՒԵՖԱ-ն:<br>320.9 մլն. դրամ ՖԻՖԱ-ն: |
| 13. | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 14. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 15. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է) | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-094-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-2/566-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-6/434-12 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի հունվարի 17-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2012 թվականի փետրվարի 28-ը» բառերով:

2. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ունանեսի Ղեներջիի միջոցով Հայաստանի հանրային ռադիոընկերության երաժշտախմբերի աջակցման հիմնադրամի համար, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված երաժշտական գործիքները (33 տեղ, 1216 կգ ընդհանուր քաշով, 10325 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-095-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի N 3/3.8-1/89917-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 25-ի N ԱԱ/3-4/576-11 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01538594) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էնտազիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528215) 2011 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է Դեղորայքակայուն տուբերկուլյոզի բաժանմունքի վերանորոգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 2060220 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**3 փետրվարի 2012 թվականի N Մ- 096-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 25-ի N ՍՔ/15-1/560-12 ու հունվարի 31-ի N ՀԳ/15-1/695-12 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 2-ի N 3/3.8-1/1045-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 2-ի N ԱԱ//3-4/844-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02559042) և «Հայաստանի բժիշկ ուսանողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ (ՀՎՀՀ՝ 01510863) 2012 թվականի հունվարի 9-ին կնքված N ՀՀ ԱՆԳ -ԲԸԾՁԲ-11/2 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է միգրանտների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցառումների իրականացման ծառայությունների մատուցում՝ 63741125 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ- 097-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N ՍՔ/15-1/461-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/982-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 31-ի N ԱԱ/3-4/737-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին (երկրորդ փուլ)» N Մ-642-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00837047) 2011 թվականի դեկտեմբերի 22-ին



կնքված N ԱԾԻԳ-ԲԸԱՀ-11/5 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի գրասենյակի ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 988975 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-098-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N ԱՔ/15-1/460-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/981-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 31-ի N ԱԱ/3-4/739-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա և դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշումների խմբագրություններով) և 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշում-



ներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Արսև» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08617407) 2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-11/6 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախա-տեսվում է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի մեթադո-նային փոխարինող բուժման կետի և տուբերկուլյոզի ախտորոշման լաբորատորիայի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 4286778 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (2555555 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 1731223 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 փետրվարի 2012 թվականի N Մ-099-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-ՌԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N ՍՔ/15-1/439-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/985-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 31-ի N ԱԱ//3-4/736-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա և դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Լուսաշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00051239) 2011 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-11/3 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է 11 տուբերկուլյոզային կաբինետների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացում՝ 3454000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**3 փետրվարի 2012 թվականի N Մ-100-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-40-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 30-ի N 3/3.8-1/893-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 27-ի N ԱԱ/3-4/666-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, Վայոց ձորի մարզ, գյուղ Մալիշկա, ՀՎՀՀ՝ 08906104) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկե տաճարի կառուցում» ծրագրի մասին» N Մ-40-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Կամպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02246099) 2011 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է Երևան քաղաքում Սուրբ և Կենարար Աստծո խաչի ռուս ուղղափառ եկեղեցու կառուցապատման աշխատանքների իրականացում՝ 600000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և 400 գծ.մ դեկորատիվ մետաղական ցանկապատի ձեռքբերում՝ 36864000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի .

2) «Կամպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02246099) և «Վան-69» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01509316) 2011 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է Երևան քաղաքում Սուրբ և Կենարար Աստծո խաչի ռուս ուղղափառ եկեղեցու կառուցման համար տարբեր տեսականու լիտոիդային խճի ձեռքբերում՝ 300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և շինարարական լիտոիդային ավազի ձեռքբերում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

